16484

361
4-76

1915

361
Կ-76

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ

Վարչութիւնը խնդրում է ընկերութեան մեծարգոյ անդամներին շնորհ բերել ընդհանուր ժողովի, որ նշանակուած է կիւրակի, ապրիլի 26-ին, առաւօտ. ժամը 11-ին ընկերութեան արհեստանոցում.

Պասկեւիչի փող. № 13.

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2002

361
Կ-76

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մն. Մարտիրոսեանցի, պուշկ. փող. № 3.
1915

361
Կ-76

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1914 թ.

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2002
361
Կ-76

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մն. Մարտիրոսեանցի, պուշկ. փող. № 3.
1915

367 / 4-76
370 / Ձ437-Տե

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կովկասի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր ժողովի, որ տեղի ունեցաւ 1914 թ. ապրիլի 12-ին։

Սոյն ժողովը լինելով երկրորդը, օրինական համարուեց ներկայ գտնուող 35 անդամների մասնակցութեամբ, ուստի Վարչութեան նախագահ տ. Հ. Մարտիրոսեանը բանալով նիստը, առաջարկեց ընտրել Ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար։ Նախագահ ընտրուեց տ. Կ. Լիսիցեան, քարտուղար օր. Կ. Մուրադեան.

Ընդհանուր ժողովի նախագահը, Վարչութեան առաջարկութեամբ, նախ քան հերթական հարցերին անցնելը, խնդրեց Ընդհանուր ժողովին յոտնկայս յարգել տ. տ. Նադեժդա Ալիխանեանի, Մարիամ Խատիսեանի և պ. Աղէքսանդր Քիշմիշեանի յիշատակը։ Առաջինը մի քանի տարի շարունակ վարել է Վարչութեան նախագահի պաշտօնը, երկրորդը երկար տարիներ վարել է նոյն պաշտօնը և 30 տարի Ընկերութեան Վարչութեան մէջ գործել է իբրև Վարչութեան անդամ, ուստի իւր բեղմնաւոր գործունէութեան համար ընտրուել է Ընկերութեան պատուաւոր անդամ։ Երրորդը, պ. Ա. Քիշմիշեան, մօտ 10 տարի վարել է Ընկերութեան Վարչութեան քարտուղարի պաշտօնը և ընդհանրապէս օգնել է Վարչութեան իւր խորհուրդներով, ուստի և ընտրուել Ընկերութեան պատուաւոր անդամ։

Այնուհետև Ընդհանուր ժողովի քարտուղար օր Կ. Մուրադեանը կարդաց 1913 թ. Ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, որը հաստատուեց առանց փոփոխութեան։

Վարչութեան անդամ-քարտուղար տ. Եր. Յարութիւնեանը կարդաց Վարչութեան գործունէութեան մասին։

Գուլբագործութեան արհեստանոցի զեկուցումից պարզուեց, որ բարակ ասեղներով մեքենայ չունենալու պատճառաւ, Ընկերութիւնը բարակ թելերից պատուէրներ չի կարող ընդունել, ուստի տ. Կ. Լիսիցեանը առաջարկեց գնել մի այդպիսի մեքենայ։ Վարչութիւնը պատասխանեց, որ այդ որոշումը արդէն Վարչութիւնը կայացրել է և մօտ ապագայում Ընկերութիւնը կունենայ այդ մեքենան։

Ուշադրութեան առնուեց տեկնօջ կողմից այն հանգամանքը, որ նոյն արհեստանոցի աշակերտուհիներից շատերն են հեռացել տարուայ կիսին, որ բացատրւում է վարժուհու հիւանդութեան պատճառաւ։

Վարչութիւնս այդ պատճառաբանութիւնը լրացրեց հետեւեալ բացատրութիւնը տալով. առհասարակ նկատելի է, որ այս արհեստանոցը առանձնապէս չի գրաւում աշակերտուհիներին, նրանք աւելի ձգտում են մտնել կար ու ձևի դպրոցը և գլխարկի արհեստանոցը, եթէ այս չի յաջողւում, այդ դէպքում հաշտւում են այն մտքի հետ, որ պէտք է մտնեն գուլբանոցը, սակայն մտնելուց յետոյ ծանօթանալով գուլբանոցի պայմանների հետ, տեսնելով, որ այս արհեստը սովորելուց յետոյ կարևոր է ձեռք բերել մեքենայ, որը բաւական թանգ արժի, շատերը տարուայ մէջ հեռանում են, ի նկատի ունենալով, որ իրանք միջոց չունեն մեքենայ առնելու։ Մասամբ էլ 'ի հարկ է, հաշուէտւութեան տարին աշակերտուհիներին հեռանալու առիթ է տուել թէ վարժուհու հիւանդութիւնը և թէ Վարչութեան անդամ և գուլբանոցի կառավարչուհի տ. Ն. Ղամբարեանի քաղաքից երկար ժամանակ բացակայելը։

Գլխարկի արհեստանոցի զեղուցումից պարզուեց, որ այստեղ աշակերտուհիների թիւը աւելի է, այդ բացատրւում է նրանով որ այս արհեստը աւելի հեշտ է և աւարտելուց յետոյ աշակերտուհիները հեշտութեամբ, առանց նախապատրաստական ծախքերի, կարողանում են ամսական 15—20 ռ. աշխատել։

Ի նկատի առնուեց միայն, որ պատուէրների թիւը քիչ է, այն ինչ ներկայ եղողներից շատերը պատուիրած լինելով սոյն արհեստանոցում, վկայեցին, որ պատուէրները շատ լաւ են կատարւում։

Պատուէրների փոքր քանակը Վարչութիւնը բացատրեց նախ նրանով, որ այս արհեստը որոշ սեզոն ունի, երկրորդ, որ ընկերութիւնը ձևեր և նիւթեղէն չունի, ուստի պատուիրատուն ստիպուած՝ նիւթեղէնը դրսից պէտք է առնի, որը մի փոքր պատուիրատուի գործը դժուարացնում է. երկրորդ՝ պատուէրներ գլխաւորապէս կատարում են երկրորդ տարուայ աշակերտուհիները, իսկ առաջին տարին նրանք անցնում են դասընթացը թղթի և մարլիի գլխարկներ շինելով և այլն։

Առաջարկւում է պատուէրներ շատ ունենալու համար որքան կարելի է յաճախ յայտարարել։ Գլխարկանոցի կառավարչուհի և Վարչութեան անդամ տ. Մ. Ծուրինեանը յայտնեց, որ յայտարարութիւնների համար շատ ծախսել չի կարող, որովհետև ըստ նախահաշուի այս արհեստանոցի համար յատկացրած է միայն 250 ռուբլի։

Յետոյ կարդացուեց կօշկակարութեան արհեստանոցի զեկուցումը և ուշադրութեան առնուեց դարձեալ աշակերտուհիների փոքր թիւը։

Վարչութիւնը բացատրեց, որ այդ արհեստը յանձն է առել ձրիաբար դասաւանդել Վարչութեան անդամ տ. Վ. Սոլովևան, որին ցանկալի չէ ծանրաբեռնել առժամանակ, մինչև տիկինը իւր համար մի օգնական պատրաստի. այնուհետև Վարչութիւնը կաշխատի ընդարձակել այս արհեստանոցը։

Այնուհետև կարդացուեց կար ու ձևի արհեստանոցի զեկուցումը, ելևմտից հաշիւը, որոնք նոյնութեամբ ընդունուեցին։ Կարդացուեց վերաստուգիչ յանձնաժողովի արձանագրութիւնը։

Վարչութեան գանձապահ տ. Վ. Միլեանը կարդաց 1915 թ. նախահաշիւը, որ հաստատեց Ընդհանուր Ժողովը առանց փոփոխութեան։

Վարչութիւնը յայտնեց Ընդհանուր Ժողովին, որ որոշել է կախել դպրոցի դահլիճում հանգուցեալ տ. տ. Ն. Ալիխանեանի, Մ. Խատիսեանի և պ. Ա. Քիշմիշեանի մեծադիր պատկերները։ Ընդհանուր Ժողովը տուեց իւր հաւանութիւնը։

Ընդհանուր Ժողովի նախագահը առաջարկեց պատուաւոր անդամ ընտրել. Վարչութեան անդամներ տ. Վարվառէ Միլեանին և տ. Երանուհի Յարութիւնեանին, որոնցից առաջինը երկար տարիներ վարում է ընկերութեան գանձապահի, իսկ երկրորդը քարտուղարի պաշտօնը ամենայն բարեխղճութեամբ։

Ընդհանուր Ժողովը ընդունեց այս առաջակը բուռն ծափահարութեամբ։

Յետոյ Ընդհանուր Ժողովը անցաւ ընտրութիւններին։ Ընդհանուր Ժողովի նախագահը յայտնեց, որ Վարչութիւնից վիճակով հեռանում են տ. տ. Վ. Սոլովևա, Մ. Շխեան, Մ. Ղարաջեան և Վ. Միլեանը։

Ժողովականներից ոմանք առաջարկեցին վերընտրել նոյն անձանց. տ. Հեղինէ Աւթանդիլեանը առաջարկեց գաղտնի քուէարկութեան դիմել։ Գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցին տ. տ. Վ. Սոլովևա, Մ. Շխեան, Մ. Ղարաջեան և Վ. Միլեան։

Փոխ-անդամներ ընտրուեցին տ. տ. Մ. Լիսիցեան, Ե. Ղորղանեան, Ն. Ալիբէգեան և Ս. Միրզայեան։

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ. տ. տ. Հ. Աւթանդիլեան, Ա. Քալանթարեան, Ռ. Թադէոսեան և փոխ-անդամ Ն. Աւետեան։ Նիստը փակուեց ժամը $3^1/_2$-ին։

Նախագահ Ընդհանուր Ժողովի՝ Կ. Լիսիցեան

Քարտուղար Ընդհանուր Ժողովի օր. Կ. Մ'ուրադեան

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1914 ԹՈՒԻՆ։

Կովկասեան Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութեան գործունէութիւնը 1914 թուի առաջին կիսամեակում ընթանում էր իւր սովորական ուղղութեամբ, կենտրոնանալով 4 արհեստանոցների շուրջը, որոնց մասին զեկուցւում է առանձին-առանձին յետագայ էջերում։ Սակայն երկրորդ կիսամեակում, երբ ամառային հանգստից յետոյ ընկերութիւնը վերսկսեց իւր գործունէութիւնը, Վարչութիւնը չէր կարող 'ի հարկէ անտարբեր մնալ դէպի այն օրհասական կարիքները, որոնց ենթակայ էր ամբողջ Ռուսաստանը ներկայ համաշխարհային սոսկալի պատերազմի շնորհիւ։ Առաւել ևս Ընկերութիւնը ստիպուած էր լարել իւր ուժերը, երբ ակնայայտնի էր և անխուսափելի ռուս-տաճկական պատերազմը և հայ կամաւորների մասնակցութիւնը այդ պատերազմում։

Սեպտեմբերի սկզբից հէնց Ընկերութիւնը, իւր ամբողջ կազմով համարեա, սկսեց սպիտակեղէն պատրաստել թէ զօրքի և թէ զինուորական հիւանդանոցների համար. նիւթը գլխաւորապէս ստանում էր Կովկասեան Կենտրոնական և Քաղաքային Կենտրոնական Կոմիտէներից, նոյնպէս Կով. Հայոց Բարեգործ. Ընկերութիւնից։ Մասամբ էլ Ընկերութիւնը իւր միջոցներից յատկացրեց մի գումար, 155 ռ. 77 կ., որով պատրաստեց 10 դիւժին սպիտակեղէն և ուղարկեց Կովկասեան Կենտրոնական Կոմիտէի նախագահ Կոմս Վորոնցով-Դաշկովային։

Հոկտեմբերի 18-ից, երբ յայտարարուեց ռուս-տաճկական պատերազմը, Ընկերութիւնը ստիպուած էր կրկնապատկել իւր ուժերը, օգնութեան հասնելով հայ կամաւորներին հագուստեղէն մատակարարող մարմիններին։ Այդ ժամանակ, շնորհիւ տիրող հանգամանքների, գոյութիւն ստացաւ մի նոր մարմին, այն է «Թիֆլիսի Հայ Կանանց կոմիտէն», որի նպատակն էր հայ կամաւորների համար սպիտակեղէն և այլ պիտոյքներ պատրաստել։ Ընկերութեանս Վարչութիւնը, իւր ամբողջ կազմով համարեա, մտաւ այդ կոմիտէի մէջ և ամէն կերպ աշխատում է աջակցել վերոյիշեալ նպատակին։ Նոյնիսկ արհեստանոցների սենեակներից մինը Վարչ. յատկացրեց այդ մեծ գործին, որպէսզի աւելի յարմարութիւններ ստեղծած լինի գործի յաջողութեան համար։

1914 թ. սեպտեմբերի 10-ից մինչև 1915 թ. դեկտ. 24-ը Ընկ.

կար ու ձևի գպրոցում պատերազմի կարիքներին օգնութեան հասնող զանազան Ընկերութիւնների համար կարուել է 425 կտոր սպիտակեղէն, իսկ հայ կամաւորների համար 4220, ընդամենը այդ ժամանակամիջոցում կարուել է 4645 կտոր։

Դեկտեմբերից պատերազմի ընդհանուր կարիքներին աւելացաւ և մի այլ հսկայական հոգս, որը մանաւանդ սկզբներում, ամբողջապէս համարեա ծանրանում էր Բարեգ. և այլ նման Ընկերութիւնների վրայ. դա պատերազմի արհաւիրքներին զոհ դարձած թշուառ փախստականների անտանելի վիճակն էր, որը հասարակութիւնից պահանջում էր անյապաղ օգնութիւն։ Վարչութիւնս սկզբում մի քանի խորհրդակցութիւններ ունեցաւ այդ հարցի շուրջը, սակայն ի նկատի առնելով, որ վարչութեանս բոլոր անդամները աշխատում են ուրիշ Ընկերութիւնների մէջ, «Թիֆլիսի Հայ Կանանց կոմիտէի» Նպաստամատոյց և Գիւղատնտ. Ընկերութիւնների մէջ, որոնց գլխաւոր նպատակն է ներկայումս փախստականներին օգնութեան հասնելու խնդիրը, որոշեց առանձին միջոցների չձեռնարկել։ Միայն նրանց չափահաս աղջիկների համար կար ու ձևի ժամանակաւոր դասընթացներ որոշեց ունենալ, որ պէտք է սկսէր իւր գոյութիւնը 1915 թ. փետրուար ամսից*, բացի այդ ցանկացողներին ընդունել դուլբագործութեան և կօշկակարութեան արհեստանոցները։

Երբ մօտենում էին Ծննդեան և նոր տարուայ տօները, վարչութիւնս որոշեց Ծննդեան ընծաներ պատրաստել Կովկասեան զօրաբանակի համար և այդպիսով խրախուսել անձնուէր զինուորներին ու զգացնել տալ, որ հասարակութիւնը նրանց չի մոռանում և աշխատում է հոգալ գոնէ նրանց առօրեայ կարիքները։ Այս նպատակով վարչութիւնս տեղական լրագրներում մի կոչ տպեց, խնդրելով հասարակութեանը նուիրաբերել եղբայր զինուորների համար մի մի փոքրիկ պարկ ամենաանհրաժեշտ իրեր. տաք շորեր, ծխախոտ, թէյ և այլն. այս կոչը արձագանք գտաւ հասարակութեան կողմից և վարչութիւնս շնորհակալութեամբ ստացաւ 2050 պարկ ընծաներ, իւրաքանչիւրը մօտաւորապէս 3 ռուբ. արժողութեամբ, որոնք ուղարկեց Կովկասեան զօրաբանակը. բազմաթիւ շնորհակալական նամակներ ստացուեցին թէ ընկերութեան և թէ պարկեր նուիրողների հասցէով դնդապետներից ու զինուորներից, որոնք ապացոյց են, թէ

*) 1915 թ. փետրուարի 2-ից բացուած են այդ դասընթացները, ընդունուել են 30 հոգի փախստականներից։

որքան հոգեզան մեծ հաճոյք են պատճառել այդ ընծաները հայրենիքից ու մտերիմներից հեռու գտնուող զինուորներին. Վարչութիւնս իր կողմից մամուլի միջոցաւ յայտնեց իր խորին շնորհակալութիւնը թէ նուիրատուներին և թէ այս գործին աջակցողներին։

Այն հանգամանքը, որ Վարչութիւնս ստիպուած էր արձագանք տալ ընդհանուր կարիքներին և Ընկերութեան արհեստանոցները իրանց ամբողջ կազմով մասամբ այդ նպատակին ծառայեցնել, ի հարկէ չէր կարող անհետևանք անցնել Ընկերութեան համար։ Շնորհիւ վերոյիշեալ հանգամանքների, ընկերութիւնը չէր կարող նախկին տարիների չափով ձեռագործներ պատրաստել և նիւթապէս ի հարկէ տուժեց. պատրաստի ձեռագործներ չունենալու պատճառաւ տարեկան վաճառք չկազմակերպեց. բացի դրանից, վարչութիւնս, նոյն հանգամանքների շնորհիւ, հնարաւորութիւն չունեցաւ կազմակերպել Ընկերութեան սովորական երեկոյթը. ուստի 1914 թ. Ընկերութիւնը բաւականին մեծ դեֆիցիտ ունեցաւ 2338 ռ. 78 կ. որպէս զի մասամբ կարելի լինի այդ դեֆիցիտը ծածկել, Վարչութիւնս մտադիր է սոյն ապրիլի 26-ին զբօսանք կազմակերպել։

Հաշուէտուութեան տարում Ընկ. ունեցել է 4 մշտական անդամ տ.տ. Հ. Կրասիլնիկեան, Մ. Ծուրինեան, Ն. Աֆրիկեան և Լ. Մութաֆեան, որոնցից միանուագ ստացուել է 150-ական ռուբլի և 145 իսկական անդամ։

Հաշուէտուութեան տարին Ընկերութիւնը ստացել է զանազան նուիրատուութիւններ 2059 [illegible] 35 կ., և յայտնել է իւր խորին շնորհակալութիւնը բոլոր նուիրատուներին, որոնց ցանկը առանձնապէս տպուած է հետևեալ էջերից մէկում։

1914 թ. Կովկ. Հայուհեաց Բարեգ. Ընկ. հետևեալ մասնակցութիւնն է ցոյց տուել դէպի հասարակական այլ երևոյթներ. հեռագրով շնորհաւորել է երաժշտագէտ Նիկողայոս Տիգրանեանի 25-ամեայ յօբելեանը։ Մասնակցել է Իսահակ Յարութիւնեանի 30-ամեայ գրական և 25-ամեայ ուսուցչական յօբելեանին, ներկայացուցիչ ընտրելով Վարչ. նախագահ՝ տ. Հ. Մարտիրոսեանին և յանձնարարելով շնորհաւորական ուղերձ կարդալ։ Մասնակցել է Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. հրաւիրած ընդհանուր ժողովին, որը բաղկացած էր Կովկասի բոլոր հայկական Ընկերութիւնների ներկայացուցիչներից պատերազմից վնասուածներին Հայկական Եղբայրական օգնութիւն հասցնելու նպատակաւ։ Ներկայացուցիչներ էին ընտրուած՝ տ.տ. Շ. Օգանեզեան և Ե. Յարութիւնեան։ Մասնակցել է Բաղաքային Կենտրոնական Կոմիտէի գործունէութեանը, ներկայացուցիչ ընտրելով տ. Ն. Ղամբարեանին։

Վարչութիւնս ամբողջ վարչական կազմով ներկայ է գտնուել ընկերութեան պատուաւոր անդամ և Վարչութեան նախկին նախագահ տ. Մարիամ Խատիսեանի ամբիծքին։ Ի նկատի ունենալով հանգուցեալի բեղմնաւոր հասարակական գործունէութիւնը, և երկար տարիներ Ընկերութեան Վարչութեան անդամի ու Նախագահի պաշտօնավարութիւնը, Վարչութիւնս հեռագրով դիմեց Վեհափառ Հայրապետին և խնդրեց թոյլ տալ թաղել հանգուցեալին Վանքի աւագ եկեղեցու գաւթում։ Վեհափառը Վարչութեանս խնդիրը յարգեց և հանգուցեալը թաղուեց Վանքի աւագ եկեղեցու գաւթում։ Վարչութիւնը ներկայ էր թաղմանը ամբողջ վարչական, մանկավարժական և աշակերտական կազմով. դագաղի վրայ դրուեց թարմ ծաղիկներից մի պսակ, Վարչութեան կողմից դամբանական խօսեց տ. Ե. Յարութիւնեան, մանկավարժական խորհրդի կողմից տ. Ա. Կուզանեան և աշակերտուհիներից V բաժ. մի սանուհի։ Ի յիշատակ հանգուցեալի վարչութեան անդամները իրանց մէջ հաւաքեցին 130 ռուբլի, պսակի փոխարէն ստացուեց հանգուցեալի ազգականներից ու յարգողներից 340 ռուբլի, ընդամենը 470 ռուբլի։

Վարչութիւնս որոշեց այդ գումարը գործադրել ձևի հայերէն ձեռնակ հրատարակելու գործին։

Վարչութիւնը ամբողջ կազմով ներկայ է գտնուել նաև ընկերութեան պատուաւոր անդամ պ. Աղէքսանդր Քիշմիշեանի հոգեհանգստին ու թաղմանը և թարմ ծաղիկներից պսակ դրել հանգուցեալի դագաղին։

Վարչութիւնս յայտնում է իւր խորին շնորհակալութիւնը բժիշկ Նիկողայոս Խատիսեանին, որը նախկին տարիների նման առանց վարձատրութեան բժշկում է արհեստանոցների սանուհիներին, նոյնպէս օր. օր. Ն. Աթանդիլեանին, Պօղովեանին և Սահակեանին որոնցից առաջին երկուսը առանց վարձատրութեան դասաւանդում էին ռուսաց լեզու, իսկ երկրորդը թուաբանութիւն, և Վարչութեանս անդամ տ. Վ. Սօլովևային, որ առանց վարձատրութեան դասաւանդում էր կօշկակարութեան արհեստը։

ԶԵԿՈՒՅՈՒՄՆ ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՄԱՍԻՆ

1913—14 ուս. տարուայ.

1913 թ. սեպտեմբերին կար ու ձեւի արհեստանոցում սովորում էին 100 աշակերտուհիք, որոնք հետեւեալ կերպով էին դասաւորուած.

II. դաս.	— 35 աշ.	IV. »	— 20 »
III. »	— 26 »	V. »	— 19 »

Տարուայ ընթացքում արհեստանոցից հեռացան 7 աշակերտուհիք՝ երկուսը —հիւանդութեան, երկուսը —ընտանեկան հանգամանքների, իսկ երեքը՝ ամուսնանալու պատճառով։

Բոլոր աշակերտուհիների ծնողներին ըստ պարապմունքի կարելի է հետեւեալ դասակարգերի բաժանել.

Արհեստաւոր	49
Վաճառական	11
Մանրավաճառ	24
Բանւոր	10
Գործակատար	6

Տարուայ ընթացքում արհեստ. աշակերտուհիներն աշխատել են պատուէրներից.

II. դաս.	— 141 ռ.	78 կ.
III. »	— 100 ռ.	80 կ.
IV. »	— 251 ռ.	05 կ.
V. »	— 634 ռ.	15 կ.
Ընդամենը	1127 ռ.	78 կ.

Բացի պատուէրներից՝ բոլոր աշակերտուհիները, պատուէրներից ազատ ժամանակ կարել են նաեւ կանանց բլուզներ ու շրջազգեստներ, մանկական զգեստներ և գոգնոցներ, սեղանատան սպիտակեղէն և այլն, որոնք վաճառքի են հանուել տարեկան ցուցահանդէսի օրը։ Այդ վաճառքից ստացուել է զուտ արդիւնք՝ 284 ռ. 45 կ. որ պատուէրներից ստացած գումարի հետ կազմում է 1412 ռ. 23 կ. Այս գումարից ընթացաւարտ աշակերտուհիները ստացել են %—136 ռ. 30 կ.։

Արհեստանոցի ուսուցչական խումբը, որ կազմած է 8 վարժուհի—դասատուներից և մի աւագից, ունեցել է ամիսը 1—2 անգամ մանկավարժական խորհրդի նիստ՝ նուիրած արհեստանոցին վերաբերեալ արհեստագիտական և մանկավարժական խնդիրներին։

Տարուայ ընթացքում իւրաքանչիւր աշակերտուհին բացակայել է միջին թւով 9 օր.

Տարուայ վերջը աշակերտուհիները հետեւեալ յառաջադիմութիւնը ցոյց տուին.—փոխադրուեցին հետեւեալ դասարան 58 հոգի. մնացին նոյն դասարանում 26 հոգի, աւարտեցին և ստացան վարպետուհու վկայական հետեւեալ 9 աշակերտուհիք. 1. Ազատեան Շուշանիկ, 2. Զախուտեան Արուսեակ, 3. Կիւրեղեան Լուսընթաղ, 4. Յակոբեան Տիգրանուհի, 5. Սարգարեան Զանապան, 6. Սարգսեան Շուշանիկ, 7. Տէր-Սիմէոնեան Զարուհի, 8. Տէր-Գրիգորեան Արուսեակ, 9. Վառամեան Անանա։

Բոլոր յիշեալ շրջանաւարտները ներկայումս պարապում են կար ու ձեւի արհեստով՝ կամ օրավարձով, կամ իրանց տներում պատուէրներ ընդունելով։

Ամենաչքաւոր աշակերտուհիների թիւն էր 21։ Սրանք ստացել են կօշիկ, զգեստ, սպիտակեղէն, դասական և ձեռագործի պիտոյք և դեղօրայք։ Սրանց թիւմն են և բարերարների անուան 10 թօշակառու աշակերտուհիք։ Սոքա են՝ Մանուէլեան Ովսաննա—կատ. Եւանգուլեանի անուան. Սահակեան Սաթինիկ և Մղեբրեան Արուսեակ - Մարիամ Մակարեանի, Մանուկ-Աղայեան Փառանձէմ - Նունէ Փրիդոնեանի, Յակոբեան Արուսեակ — Նունէ Թամամշեանի, Յակոբեան Շուշանիկ—Ս. Փոնդոյեանի, Սահակեան Բրաբիոն և Բուդաղեան Արուսեակ—Կարապետ Մուտաֆեանի, Քոչարեան Մարիամ և Գրիգորեան Արմենուհի—Նադեժդա Ալիխանեանի անուան։

Թուլակազմ և հիւանդոտ աշակերտուհիներից երկուսը առանձնապէս ուղարկուել են ծղնէթ, իսկ չորսը՝ Դիլիժան ամարանոցը, խանգարած առողջութիւնը վերականգնելու։

Պարապմունքն սկսուել է սեպտեմբերի 4-ին և աւարտուել յունիսի 5-ին։

ԶԵԿՈՒՅՈՒՄՆ ԳՈՒԼԲԱՆՈՑԻ ՄԱՍԻՆ

Գուլբանոցում 1914 թ. աշխատում էին 10 հոգի նախկին վարժուհու ղեկավարութեամբ, հին աշակերտուհիներից 2-ը, 6 հոգի փախստականներից, 1 հոգի վճարով և մի վարպետուհի։ Առհասարակ աշակերտուհիների մէջ այս արհեստանոցը մտնելու առանձին ձգտում չի նկատւում. նրանք նախ աշխատում են մտնել կար ու ձեւի արհեստանոցը, սակայն երբ մի որեւէ պատճառաւ չեն կարողա-

նում կար ու ձևի արհեստանոցը ընդունուել, այդ դէպքում մտնում են գուլբանոց և շատ յաճախ, իրանց բաւարարուած չհամարելով, տարուայ կիսին հեռանում են։

Սեպտեմբերից Վարչութիւնը մտադիր է ընդունել այս արհեստանոցը աւելի հասակաւոր օրիորդների ու կանանց, որոնք կար ու ձևի արհեստանոցը մտնելու հաւակնութիւնը չեն ունենայ։ Բացի դրանից որոշուած է գուլբանոցի աշակերտուհիների հետ էլ մասամբ ձև անցնել, որովհետև կոստիւմներ ու շորեր գործելու համար ձևը անհրաժեշտ է. որոշուել է նոյնպէս ձեռքի զանազան գործուածքներ սովորեցնել։

ՉԵԿՈՒՑՈՒՄՆ ԳԼԽԱՐԿԱՆՈՑԻ ՄԱՍԻՆ

Գլխարկի արհեստանոցում 1914 թ. կար 18 աշակերտուհի, տարուայ ընթացքում 4 հոգի հեռացան, երկուսը տեղափոխուեցին Տփխիսից, 1-ը ամուսնացաւ, իսկ 1-ի հեռանալու պատճառը Վարչութեանս յայտնի չէ։

Այս աշակերտուհիներից 6 հոգի, որոնք լաւ յառաջադիմութիւն են ցոյց տուել, 1915 թ. մայիսին կենթարկուեն քննութեան և կստանան աւարտման վկայական։

Այս արհեստանոցում հաշուէտուութեան տարին բացի այն, որ անցել են որոշ դասընթաց, կատարել են հետևեալ պատուէրները գլխարկներ 90, 3 մանկական գլխարկ, 4 բուա, 6 մուֆտա և 10 գլխարկ նորոգել են, այս բոլորի համար ստացուել է 279 ռուբլի։

ՉԵԿՈՒՑՈՒՄՆ ԿՈՇԿԱԿԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՄԱՍԻՆ

1914 թ. յունուարի 1-ից մինչև 1915 թ. յունուարի 1-ը կոշկակարութեան արհեստանոցում սովորում էին 10 հոգի, որոնցից 4-ը անցել են ամբողջ դասընթացը լրիւ, իսկ մնացած 6 հոգին կը վերջացնեն յունիսի 1-ին։ Շրջանաւարտներից մէկը այնքան յաջող սովորեց, որ կարող է արդէն դասաւանդել այդ արհեստը։

Այս արհեստանոցի համար 1914 թ. Ընկերութիւնը ծախք չի ունեցել, որովհետև նախընթաց տարուայ յատկացրած 50 ռուբ. մնացորդ կար 5 ռ. 8. կոպ. և քիչ էլ նիւթեղէն. հաշուէտուութեան տարում աշակերտուհիներից ստացուել է վարձ 9 ռուբ. իսկ ծախած գործերից 13 ռ. 70 կոպ. ընդամենը 27 ռ. 78 կ. այս գումարից ծախսուել է նախապատրաստական նիւթեղէնի համար 22 ռ. 51 կ. լրացուցիչ գործիքներ 70 կ. ընդամենը 23 ռ. 21 կ., ուրեմն 1915 թ. մնում է 4 ռ. 57 կ. բացի այդ մօտաւորապէս 20 ռուբլու նիւթեղէն։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՒՀԵԱՑ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1914 թ.

	1914 թ. նախա-հաշիւը		ԻՍԿԱԿԱՆ ՄՈՒՏՔ			
1914 Թուի յունուարի 1-ին մնում էր.						
1. Քաղաքային կրեդ. ընկ. օբլիգացիաներ . .	—	—	45010	60		
2. 3 խաղարկ. տոմս I, II, III փոխարինութեան .	—	—	1165	—		
3. Թիֆլիսի առևտր. բանկում որոշ ժամանակ .	—	—	3449	01		
4. Շարժական կայք	—	—	1857	89		
5. Ձեռագործի նիւթեր	—	—	741	78		
6. Առևտրական բանկում ընթացիկ հաշուով . .	—	—	118	91		
7. Վաճառականների բանկ. » » . .	—	—	1500	—		
8. Ընկերութեան դանձարանում	—	—	1045	22	54888	41
Ստացուած է՝						
1. Անդամավճարներ	1200	—	870	—		
2. Տոկոս ընկերութեան անժէթղթերից	1040	—	881	43		
3. Տոկոս յատուկ դրամագլխից՝						
սեփական տուն ձեռք բերելու . . .	1372	74	1372	74		
ամառանոց կառուցանելու	71	26	71	26		
թոշակառուներին	266	—	266	—		
4. Կար ու ձևի արհեստանոցի պատուէրներից .	1200	—	1152	73		
5. Ձեռագործների վառարքից	260	—	302	80		
6. Նուիրատուութիւններ՝						
տ. Մ. Խատիսեանի յիշատակին . . .	—	—	470	—		
թոյլ աշակ. ամառանոց ուղարկ. համար	—	—	167	—		
ուրիշ	1000	—	1422	35		
7. Զբօսանքի և երեկոյթի հաշիւ	3000	—	621	60		
8. Միանուագ անդամավճար՝ տ. Լիւսի Մութաֆեանից, Հ. Կրասիլնիկեանից, Մ. Ցուրինեանից և Ն. Սֆրիկեանից	600	—	600	—	8197	91
Գուլպանոցի մուտքի մնացորդը	—	—	48	45		
Կօշիկների արհեստանոցից մուտքի մնացորդ	—	—	3	39	51	84
Գումար . . .	—	—	—	—	63138	16

	1914 թ. նախա-հաշիւը		ԻՍԿԱԿԱՆ ԵԼՔ			
1. Ռոճիկ վարժուհիներին և ծառայողներին . .	4584	—	4559	50		
2. Բնակարանի վարձ և ջրի փող	1840	—	1837	77		
3. Նախապատր. ձեռագ. համար նիւթեր . . .	50	—	62	51		
4. Մանր ծախս	80	—	83	13		
5. Տարազի թերթեր	40	—	12	60		
6. Վառելիք	170	—	181	45		
7. Զքաւոր աշակերտուհ. զգեստ և նպաստ . .	100	—	187	27		
8. Թուլակազմ աշակերտ. ամառանոց ուղարկելը	—	—	278	49		
9. Փոթորիկից վնասուածներին նպաստ . . .	—	—	50	—		
10. Թոշակաւորներին	266	—	266	—		
11. Դեղօրայք	20	—	15	52		
12. Դիւանական և տպագրական ծախսեր . . .	120	—	141	—		
13. Տոմսակներ ապահովագրելու	60	—	55	65		
14. Կահկարասիքի վերանորոգումը	27	—	30	15		
15. Բանուորուհիների օգտին հանած տոկոս . . .	100	—	160	60		
16. Անակնկալ ծախս	100	—	232	54		
17. Էքսպերտներին քննութեան համար	19	—	19	—		
18. Աշակերտուհիներին զբօսանքի տանելը . .	—	—	36	29	8209	47
Շարժ. գոյքի արժէքից պակասեցրած է 10%	—	—	—	—	185	78
Գլխարկների արհեստ. համար ծախսուած է	280	—	—	—	279	28
					8674	53
1915 Թուի յունուարի 1-ին մնում է						
1. Քաղաքային կրեդ. ընկ. օբլիգացիաներ . .	—	—	45010	60		
2. 3 խաղարկութեան տոմս	—	—	1165	—		
3. Առևտր. բանկում որոշ ժամանակամիջոցով .	—	—	3449	01		
4. Շարժական կայք կար 1857 89						
» » 10% հանած . . 185 78	—	—	1672	11		
1914 Թուին աւելացաւ	—	—	37	40		
5. Ձեռագործի նիւթեր	—	—	741	04		
6. Վաճառականների բանկում ընթացիք հաշուով	—	—	1438	62		
7. Առևտրական » » »	—	—	122	30		
8. Ընկերութեան դանձարանում	—	—	827	55	54463	16
Գումար . . .	—	—	—	—	63138	16

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ С.С.Р.А Публичная Библиотека 7/VI 1922 имени А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1004/15968

Գուլբանկցի ելեւմուտից հաշիւը

ՄՈՒՏՔ

1914 Թուի յունուարի 1-ին մնում էր

Շարժական կայք	433 80	
Թելեր	282 —	715 80
Ստացուած է պատուէրներից	321 90	
Ուսման վարձ մի աշակերտուհուց	15 —	336 90
		1052 70

ԵԼՔ

Ռոճիկ վարժուհուն	300 —	
Բանւորուհիների օգտին հանած տոկոս . . .	101 73	
Մանր ծախս և յայտարարութիւններ. . . .	8 37	410 10
Շարժական կայքի արժէքից պակասեցրած է 10% . . .		43 38

1915 Թուի յունուարի 1-ին մնում է։

Շարժական կայք	390 42	
Թելեր	160 35	
Մուտքից մնացորդ	48 45	599 22
		1052 70

Գլխարկների արհեստանոցի հաշիւ

ՄՈՒՏՔ

Նախորդ տարուանից մնացած նիւթեր		10 —
Պատուէրներից ստացուած է.	184 35	
Նուէր տ. Մ. Ցուրինեանից	60 —	244 35
Ընկերութեան գանձարանից ստացուած է		279 28
		533 63

ԵԼՔ

Ռոճիկ վարժուհուն	420 —	
Վարժուհու օգտին հանած տոկոս	60 —	
Աշակերտուհի Փիլտակեանի ճանապարհածախս .	9 —	
Նախապատր. ձեռագործների համար նիւթեր	19 63	508 63
Մնացած նիւթեր		25 —
		533 63

Կօշիկների արհեստանոցի հաշիւ

ՄՈՒՏՔ

Նախորդ տարուանից մնում էր։

Գործիքներ	30 96	
Նիւթեր	12 —	42 96
Ստացուած է պատուէրներից	17 60	
Ուսման վարձ	9 —	26 60
		69 56

ԵԼՔ

Պատուէրների համար նիւթեր	14 51	
Գործիքների արժէքից պակասեցրած 10% .	3 09	17 60

1915 Թ. յունուարի 1-ին մնում է։

Գործիքներ կար.	30 96		
» 10% պակաս.	3 09	27 87	
» 1914 Թ. աւելացաւ		— 70	
Նիւթեր		20 —	
Մուտքից մնացորդ		3 39	51 96
			69 56

ԱԿՏԻՒ — 1915 թուի յունուարի 1-ի բալանսը — ՊԱՍԻՒ

1. Քաղաքային կրեդ. ընկ. օբլիգ. (53500 մ.)	45010 60	
2. 3 խաղարկութեան տոմս	1165 —	
3. Առևտրական բանկում որոշ ժամանակամիջոցով	3449 01	
4. Շարժական կայք	1709 51	
5. Ձեռագործի նիւթեր	741 04	
6. Վաճառականների բանկում ընթացիք հաշուով	1438 62	
7. Առևտրական բանկում ընթացիք հաշուով . .	122 30	
8. Ընկերութեան գանձարանում	827 55	54463 63

Բացի դորանից Ընկերութիւնը ունի 285 քառ. սաժէն հող Ծղնէթ գիւղում.

Առաջին	խաղարկութեան	տոմս	№ 17526/46
Երկրորդ	»	»	№ 06477/82
Երրորդ	»	»	№ 02686/17

Վերատուչիչ մանաժողովի անդամներ՝

1. Անձեռնմխելի դրամագլուխ		11947 31
2. Յատուկ դրամագլուխ.		
Սեփ. տ. ձեռք բեր. (24900 մ. օբլ.)	24065 65	
1914 թուի տոկոս . . .	1372 74	25438 39
Սմառ. կառուց. (1500 մ. օբլ.)	1254 —	
1914 թուի տոկոս	71 26	1325 26
Թոշակառուների (5600 մ. օբլ.) . .		4768 50
Տ. Մարիամ Խատիսեանի յիշատակի ֆոնդը		470 —
3. Պահեստի դրամագլուխ կար . .	7077 50	
1914 թուի դեֆիցիտը . . .	2338 78	4738 72
4. Ծախսի գումար		5775 45	54463 63

1914 թուի եկամտից համաձայն ծախսը եղել է .		8674 53
Մուտքը եղել է ընդհանուր . .	8249 75	
Որից հանած յատուկ դրամ աւելացնելիք	1914 —	6335 75
Դեֆիցիտ		2338 78

Ա. Քալանթարեան
Ր. Թադէոսեան
Ն. Աւետեան

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ 1914 Թ.

1915 թ. փետրուարի 15-ին կայացաւ վերաստուգիչ յանձնաժողովի նիստը մասնակցութեամբ յանձնաժողովի անդամների տ. տ. Քալանթարեանի, Ն. Թադէոսեանի և փոխանդամ տիկ. Ն. Աւետեանի։

Ստուգելով Ընկերութեան ելևմտից հաշիւը և համեմատելով փաստաթղթերի հետ, գտան, որ հաշիւները պահւում են կանոնաւոր և միանգամայն համապատասխանում են ներկայացրած փաստաթղթերին։

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ՝

Ռ. Թադէոսեան

Ա. Քալանթարեան

Փոխ-անդամ Ն. Աւետեան

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Հանգուցեալ Նունէ Ղալամքարեանի որդիներից նորա յիշատակին	100 —	
Տ. Մարգարիտ Աբեանից տօներին . . .	25 —	
Պ. Գր. Կուզանեանից քրոջ Ամիրեանի յիշատակին	50 —	175 —
Տ. Մարիամ Խատիսեանի յիշատակին Կատ. և Ստ. Լիսիցեաններից	25 —	
Կատ. և Աբ. Քաթանեաններից	15 —	
Ղորղանեանեանների և Մելիք-Ղարագեոզեանների ընտ.	25 —	
Տ. Մ. Հանվերդեանից	10 —	
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկից .	10 —	
Իշխ. Վ. Բէհբութեանից	5 —	
Տիկ. Նունէ Ալիբէգեանից	50 —	
Պար. Պ. Ս. Ղամբարեանից	80 —	
Պար. Ս. Պ. Ղամբարեանից	20 —	
Տիկ. Ն. Ս. Քանանեանից	100 —	
Վարչութեան անդամներից	130 —	470 —
Հուգուցեալ Ադ. Քիշմիշեանի դուստր և փեսայ Ան. և Վ. Տէր-Գրիգորեաններից	50 —	
Կոմսուհի Վօրոնցովա-Դաշկովայից . . .	100 —	
Սրբազան Մեսրոպ եպիսկոպոսից . . .	4 35	
Տիկ. Մ. և պար. Ն. Միրիմանեաններից ի յիշատակ իշ. Մ. Թումանեանի. .	25 —	
Թիֆլիսի ժողովարանից	75 —	
Պարոն Իսահակ Վարդանեանից	50 —	
Իշխ. Ս. Վ. Արղութեանից ի յիշատակ հանգուցեալ մօր	25 —	
Քաղաքային կրեդիտային ընկերութիւնից .	150 —	
Այրի Կատարինէ Ղազարեանի կտակի համաձայն	200 —	679 35

Թուլակազմ աշակերտուհ. ամառանոց ուղարկելու համար.		
Տ. Մ. Ղարաջեանից	45 —	
Տ. Ս. Միրզայեանից	55 —	
Տ. Մ. Ցուրինեանից	10 —	
Տ. Վ. Միլեանից ի յիշատակ Ն. Թամամշեանի	12 —	
Տ. Վ. Միլեանից	10 —	
Պ. Թաթուղեանից	3 —	
Տ. Ս. Միրզայեանի նուիրած իրերի վաճառքից	12 —	
Տ. Մ. Շխեանի տուփից	15 —	
Իշխ. Կատարինէ Բէհբութեանից . . .	5 —	167 —
Պ. Մութաֆեանից ի յիշատակ հանգուցեալ ամուսին Լ. Մութաֆեանից . . .	50 —	
Թիֆլիս քաղաքից	300 —	
Հանգուցեալ Սալոմէ Յակոբեանից կտակի համաձայն	60 —	
Հանգուցեալ Մ. Դ. Ծովիանեանի ազգականներից նորա ցանկութեան համաձայն Քաղաք. կրեդ. ընկ. մի օբլիգացիա, որ տիրաժ դուրս գալով ստացուեց .	100 —	
Տ. Հ. Մարտիրոսեանից չքաւոր աշակ. Յակոբեանի համա[illegible]	50 —	
Արհեստաւորների աւագ պ. Բարսեղեանից.	5 —	
Տ. Թաշչեանից	3 —	568 —
		2059 35

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄՈՒՏՔ 1915

Իսկական անդամներից	870	—	
Ընկերութեան գումարների տոկոս	1040	—	
Պատուէրներից	1200	—	
Ձեռագործների վաճառքից	100	—	
Նուիրատուութիւններ	1000	—	
Զբօսանքից և ներկայացումից	1000	—	
Միանուագ վճարող անդամներից	600	—	
Ցատուկ դրամագլխից տոկոս. Թոշակառուների	266	—	
» » » սեփական տան	1372	75	
» » » ամառանոց կարուց.	71	25	7520 —
Դեֆիցիտ			1945 —
			9465 —

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Թոռ/ ԵԼՔ

Ռոճիկ վարժուհիներին և ծառայողներին	4644	—	
Տան վարձ և ջրի փող	1840	—	
Նախապատրաստ. ձեռագ. համար նիւթեր	50	—	
Մանր ծախս	80	—	
Տարազի թերթեր	25	—	
Վառելիք	170	—	
Զքաւոր աշակերտուհիներին զգեստ և նպաստ	100	—	
Դեղօրայք	15	—	
Դիւանական ծախս և յայտարարութիւններ	60	—	
Կահկարասիք	50	—	
Կահկարասիքի վերանորոգումը	30	—	
Տոմակներ ապահովագրելը	60	—	
Աշակերտուհիների օգտին հանած տոկոս	100	—	
Անակնկալ ծախս	100	—	
Էքսպերտներին քննութեան համար	19	—	
Թոշակառուներին	266	—	7609 —
Գլխարկների արհեստանոցի համար	280	—	
Գուլպանոցի համար	100	—	
Կօշիկների արհեստանոցի համար	32	—	412 —
Ցատուկ դրամագլ. աւելացնելիք գումար	1372	75	
» » » »	71	25	1444 —
			9465 —

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Պատուաւոր անդամներ՝

† պ. Ալ. Քիշմիշեան
տ. Վ. Ռոտինեան
† տ. Մ. Խատիսեան
տ. Հ. Մարտիրոսեան
տ. Ն. Ղամբարեան
տ. Ս. Երիցեան
տ. Մ. Ցուրինեան
տ. Վ. Միլեան
տ. Եր. Ցարութիւնեան

Ընկերութեան վարչութիւն՝

տ. Հ. Մարտիրոսեան, նախագահ
տ. Մ. Ցուրինեան, փոխ-նախագահ
տ. Վ. Ռոտինեան
տ. Ն. Ղամբարեան
տ. Ե. Ցարութիւնեան քարտուղար
տ. Մ. Ղարաջեան
տ. Մ. Շիեան
տ. Ս. Օգանէսեան
տ. Վ. Միլեան, գանձապահ
տ. Ե. Եարալեան
տ. Վ. Սոլովեա

Փոխ-անդամներ՝

տ. Մ. Լիսիցեան
տ. Ե. Կորգանեան
տ. Ն. Ալիբէկեան
տ. Միրզոյեան

Վերատեսուչ յանձնաժողով՝

տ. Հ. Աբթանդիլեան
տ. Ա. Քալանթարեան
տ. Ռ. Թադէոսեան

Փոխ-անդամ՝

տ. Ն. Աւետեան

ՄԻԱՆԻԱԳ ՎՃԱՐՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ

տ. Աբիեան Մարգարիտ
† կոյս Աբամելիքեան
տ. Աւան-Իւբաշեան Աննա
տ. Աբթանդիլեան Հեղինէ
տ. Ալիբէկեան Նունէ
† տ. Ալիխանեան Նադեժդա
տ. Աղաբեգեան Մարիամ
† իշ. Արղութեան Երկայնաբազուկ Մարիամ Սոլ.
իշխ. Արղութեան Երկայնաբազուկ Մարիամ Յով.
10 տ. Ադիլխանեան Հեղինէ
օր. Աբթանդիլեան Եղիսաբէթ
տ. Անանեան Մարգարիտ
տ. Աֆրիկեան Նունէ
տ. Բաբայեան Սոֆիա
տ. Բաղդասարեան Անահիտ
տ. Բաբայեան Վառվառէ
իշ. Բէհբութեան Կատարինէ
իշ. Բէհբութեան Վառվառէ
† իշ. Բէկթաբէկեան Մարիամ
20 տ. Գէորբեան Նունէ
† Դոլուխանեան Եղիսաբէթ
տ. Եւանգուլեան Վառվառէ
տ. Եարալեան Կատարինէ
† տ. Էմինեան Աննա
† կոյս Էնֆիաճեանց Իսկուհի
տ. Թամիրեան Սոֆիա
տ. Թայիրեան Եղիսաբէթ
Մայրապետ Թայիրեան Հռիփսիմէ
տ. Թիւնիբէկեան Եղիսաբէթ
30 † տ. Խատիսեան Մարիամ
† տ. Յովհնեան Մարիամ
տ. Ծատուրեան Վարդուհի
տ. Լինդլէյ
տ. Խունսունց Գայանէ
տ. Կորգանեան Եղիսաբէթ
օր. Կորգանեան Նորա
տ. Կրասիլնիկեան Հեղինէ (Ն. ա.)
տ. Ղորղանեան Նունէ
տ. Ղամբարեան Նունէ
40 տ. Ղարաջեան Մարիամ
տ. Ճգնաւորեան Մարիամ
տ. Մաղաթեան Աննա
† տ. Մանթաշեան Դարեա
տ. Մարկոսեան Կատարինէ
տ. Մարտիրոսեան Հայկանուշ
տ. Մարտիրոսեան Մարիամ
† տ. Մութաֆեան Լիւսի
† տ. Մեհրաբեան Կատարինէ
տ. Մելիքեան Մարիամ
50 տ. Միրիմանեան Մարիամ
տ. Միլեան Վառվառէ
տ. Միրզոյեան Եղիսաբէթ
տ. Յակոբեան Նունէ
տ. Մութաֆեան Շողակաթ
† տ. Նադիրեան Կատարինէ
տ. Նունուֆարեան Նատալիա
† տ. Շադինեան Քալի
տ. Շումախեր Եկատերինա
† տ. Զիթախեան Սոֆիա
60 † տ. Ռոտինեան Նատալիա
տ. Ռոտինեան Աննա
տ. Ռոտինեան Լուսիկ

տ. Ռոտինեան Վառվարէ
տ. Սաֆարեան Նատալիա
տ. Սարուխանեան Յուստինէ
տ. Վարդանեան Աննա
տ. Վարդանեան Նատալիա
տ. Վարդանեան Նունէ
տ. Վարդպատրիկեան Օլգա
70 տ. Տէր-Առաքելեան Եւգենիա
տ. Տէր-Մարգարեան Շուշանիկ

*) Ադամեան (Ներսէսեան) Թամար
Ալիխանեան Կատարինէ
Ալէլեան Վառվառէ
Արամակլիսեան Նունէ
Արամենեան Եղիսաբէթ
Արղութեան Կատարինէ, մայրապետ
Արղութեան Կատարինէ, իշխ.
Բաղդոյեան Թեկլէ
Դաւթեան Մարիամ
† Եւանգուլեան Կատարինէ
Եւանգուլեան Նունէ
Էնակոլոփեան Նատալիա
Թադէոսեան Աննա
† Թամամշեան Սոֆիա
Թամամշեան Վարվառէ
† Թայիրեան Կատարինէ
Իստամանեան Սալոմէ
Լիանոզեան
† Խարազեան Վառվառէ
Խուբեան Փեփրոնիա, մայրապետ

տ. Յուրինեան Մարգարիտ
տ. Փիթոյեան Անաստասիա
տ. Քալանթարեան Սաթենիկ
տ. Քալանթարեան Սոֆիա
տ. Քանանեան Նատալիա
† տ. Քամոյեան Եղիսաբէթ
տ. Օգանէսեան Թամար
79 տ. Օգանէսեան Շուշանիկ

Խուդադեան Վարդուհի
Ծովիանեան Մայա
Ծովիանեան Կատարինէ
Կամսարակեան Աննա
† Ղորղանեան Աննա
† Մելիքեան Աննա
† Միրզոյեան Դարիա
Նազարբէգեան Մինա
Նազարբէգեան Նունէ
Զանումեան Մինա
Ռոտինեան Կատարինէ
Սարգսեան Եղիսաբէթ
Ստեփանեան Նունէ
† Ստեփանեան Ծաղիկ
Վարշամեան Վարվառէ
Տէր-Աստուրեան Վարվառէ
Տէր-Յակոբեան Եւալինա
Տէր-Յովսէփեան Օսաննա
Քանանեան Վարվառէ
Քալանթար Սոֆիա

*) Հետևեալ անձինք համաձայն ընկերութեան սկզբնական կանոնադրութեան վճարել են միայն 100 ռ.։

ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Ա.

տ. Աբեսալոմեան Նունէ
տ. Աբովեան Նատալիա
տ. Աւետիսեան Թագուհի
տ. Աւետեան Նունէ
տ. Անանեան Վարվարէ
տ. Ամբարդանեան Թամար
տ. Ամբարդանեան Վարվառէ
տ. Ալիխանեան Վարվառէ
տ. Անանեան Մարիամ
Իշ. Արղութեան-Երկայնաբազուկ Աննա
Իշ. Արղութեան-Երկայնաբազուկ Սոֆիա
տ. Արծրունի Եղիսաբէթ (Ն. ա.)
տ. Արզումանեան Փառանձեմ
տ. Առաքելեան Եղիսաբէթ
տ. Ատաբէգեան Աննա
տ. Արզումանեան Սոֆիա (Ն. ա.)
տ. Աֆրիկեան Եղիսաբէթ (Ն. ա.)

Բ

տ. Բերբերեան Մարիամ (Ն. ա.)
տ. Բերեան Եղիսաբէթ
օր. Բայսողոլեան Շուշանիկ
տ. Բաբալեան Օլգա (Նոր անդ.)
տ. Բարխուդարեան Վարդուհի
տ. Բարխուդարեան Եղիսաբէթ
տ. Բաստամեան Թամարա (Ն. ա.)
տ. Բարխուդարեան Սաթենիկ
տ. Բէզզադեան Նունէ (Նոր. ա.)
տ. Բոզարջեան Մարիամ
տ. Բոզարջեան Վարվառէ
տ. Բոզարջեան Սոֆիա (Ն. ա.)

Գ

տ. Գարսոյեան Սոֆիա
տ. Գէորգեան Սոֆիա
տ. Գիւլպիկեան Զարուհի
տ. Գուլազեան Վարվառէ
տ. Գասպարեան Սարրա

Դ

տ. Դաւթեան Քալի
տ. Դոլուխանեան Նունէ
տ. Դոլուխանեան Եւգենիա (Ն. ա.)

Ե

տ. Երամեան Հռիփսիմէ

Զ

տ. Զաւարեան Իզաբելլա (Ն. ա.)

Է

տ. Էնիկոլոփեան Եղիսաբէթ
տ. Էլիֆիաճեան Աննա
օր. Էնֆիաճեան Վարսենիկ

Թ

տ. Թարումեան Եղիսաբէթ (Ն. ա.)
տ. Թադէոսեան Վարվառէ
տ. Թամամշեան Եղիսաբէթ (Ն. ա.)

տ. Թադէոսեան Ռոզալիա
տ. Թադէոսեան Դարիա (ն. ա.)
Իշ. Թումանեան Մարիամ
տ. Թումաս Ովսաննա

Ի

տ. Իզմիրեան Սոֆիա
տ. Իսպանդիարեան Թամար (ն. ա.)

Լ

տ. Լիսիցեան Կատարինէ
տ. Լիսիցըան Մարիամ
տ. Լիսիցեան Հեղինէ
տ. Լիանոզեան Մարիամ

Խ

տ. Խաչատրեան Հռիփսիմէ
տ. Խաչատրեան Նունէ
տ. Խաչատրեան Օլգա
տ. Խատիսեան Կսէնիա (ն. ա.)
տ. Խարազեան Մարիամ

Ծ

տ. Ծովիանեան Մարիամ

Կ

տ. Կաֆեան Նունէ
տ. Կաֆեան Մարիամ
տ. Կաչկաչեան Ամալիա
տ. Կուզանեան Աննա Սեմենովնա
տ. Կուզանեան Աննա Սերգեևնա
տ. Կուսիկեան Մարիամ
տ. Կրասիլնիկեան Նատալիա

Հ

տ. Հաքիմեան Մարիամ
օր. Հախվերդեան Աննա
օր. Հախվերդեան Մաննա
տ. Հեջուբեան Եղիսաբէթ

Ձ

տ. Ձիթողցեան Շուշանիկ

Ղ

տ. Ղուլեան Աննա
տ. Ղուլեան Դարիա
տ. Ղուլեան Նադեժդա (ն. ա.)
օր. Ղուլիջանեան Կատարինէ
օր. Ղազարեան Կլաւդիա
տ. Ղալամքարեան Թամար
տ. Ղորղանեան Աննա
տ. Ղլտճեան Սաթենիկ
տ. Ղալամքարեան Կատարինէ

Մ

տ. Մանուէլեան Եւա
տ. Մելիք-Բեգլարեան Անահիտ
տ. Մելիք-Բախտամեան Նունէ
տ. Մելիք-Ղարագեօզեան Մարիամ
տ. Միրզոյեան Սոֆիա
տ. Միրզոյեան Սառա
տ. Միրիմանեան Կատարինէ
տ. Միրիմանեան Նատալիա
օր. Մուրադեան Կատարինէ (նոր անդամ)
տ. Մուրադեան Հռիփսիմէ
տ. Միրաքեան Նունէ
տ. Միրզոյեան Վարվառէ

Յ

տ. Յակովբեան Սոֆիա
տ. Յարութիւնեան Երանուհի

տ. Յարութիւնեան Մարիամ
տ. Յովհաննէսեան Շուշանիկ

Ն

տ. Նազարբէգեան Կատարինէ
տ. Նազարբէգեան Սոֆիա

Շ

տ. Շառումեան Նատալիա
տ. Շահմուրադեան Ոսկի
տ. Շահնազարեան Նատալիա
տ. Շադինեան Եղիսաբէթ (ն. ա.)
տ. Շադինեան Վարվառէ
տ. Շադինեան Արուսեակ (ն. ա.)
տ. Շահ-Պարոնեան Ռոզալիա
տ. Շխեանց Մարիամ
տ. Շխեան Վարվարէ (ն. ա.)

Ո

տ. Ոնոււացեան Կատարինէ

Չ

տ. Չիսլեան Նունէ (նոր անդամ)

Պ

տ. Պաարեան Նունէ

Ջ

տ. Ջանումեան Վարվառէ (ն. ա.)

Ռ

տ. Ռոտինեան Նատալիա

Ս

տ. Սաղաթելեան Զարուհի
տ. Սարեան Սոֆիա
տ. Սօլովեա Վարվարէ
տ. Սուլխանեան Մարիամ
տ. Սպենդիարեան Իւլիա

Վ

տ. Վարդապետեան Նադեժդա
տ. Վահրամեան Եւգենիա

Տ

տ. Տէր-Յակոբեան Սոֆիա
տ. Տէր-Նիկողոսեան Նատալիա
տ. Տէր-Միքայէլեան Աննա
տ. Տէր-Զաքարեան Օլգա (ն. ա.)
տ. Տէր-Օգանեան Կատարինէ (նոր անդամ)
օր. Տէր-Մկրտչեան Եւա
տ. Տիգրանեան Նատալիա
տ. Տէր-Օհաննէսեան Նատալիա
տ. Տէրտէրեան Սաթենիկ

Ց

տ. Ցուրինեան Ալէքսանդրա

Փ

օր. Փիրալեան Մարիամ
տ. Փրիդոնեան Մարգարիտ
տ. Փոնդոյեան Ելենայ
տ. Փոնդոյեան Կատարինէ
տ. Փրիդոնեան Մարիամ

Ք

տ. Քաթանեան Կատարինէ
տ. Քալանթարեան Աննա
տ. Քալանթարեան Սոֆիա
տ. Քիշմիշեան Թամարա
տ. Քալանթար Սոֆիա
տ. Քալանթարեան Շուշանիկ

Օ

տ. Օհաննէսեան Մար. Իւանովնա
տ. Օհաննէսեան Մար. Գէորգիևնա
տ. Օհաննէսեան Սոֆիա

С.С.Р.А Публичная Библиотека 7/XI 1932 имени А. Мясникяна

ՕՐԱԿԱՐԳ

1) 1914 թուի ապրիլի 12-ի ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը։

2) Վարչութեան 1914 թուի գործունէութիւնը։

3) Ընկերութեան 1914 թուի ելմտից հաշիւը։

4) Վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը։

5) 1915 թուի նախահաշուի ընթերցումը և վաւերացումը։

6) Հերթով վարչութիւնից դուրս եկող 3 անդամի, 4 փոխանդամի և վերաստուգիչ յանձնաժողովի անդամների ընտրութիւնները։

2013
<< Ազգային գրադարան
NL0048813